ՀԱՅՐԵՆԱՍԵՐ

օրագիր քաղաքական, բանասիրական և առևտրական

Վերատեսուչ՝ Խաչատուր Յ. Մելիքսելումյանց

28 մայիս (ուրբաթ), N 1 (առաջին տարի), 1843 թ.

Հայտարարություն

«Ամմենքս ալ պարտավոր եմք այս բարեհաջող ժամանակիս մեր ազգիս լուսավորությանը և պայծառությանը համար պետք եղած առիթները բանեցընել, և ամմեն բանե առաջ գիտությունը և վաճառականությունը երկու ձեռքով բռնել։ Վասն զի առաջինը աշխարհիս բարեկրթության ու լուսավորության հիմն է, մյուսն ալ հարստության գլխավոր պատճառն է։

Ազգասեր մարդուն սիրտը ո՞րքան կըցավի, երբոր կը լսե պատմություններեն, թե մեր ազգը առաջին ժամանակներուն մեջ ինչպես կըպայծառանային գիտությունով, լեզվագիտությունով, վաճառականությունով և զանազան արհեստներով. ինչո՞ւ համար հիմա այսքան հետ կմնա, ինչո՞ւ համար վերստին ձեռք չի բերե զանոնք, ինչո՞ւ համար բանասիրական ոգվով բարեկիրթ ազգերուն հետ հավասար չըլլա ու չի հետևի անոնց բարի օրինակներուն, թե անոնք ինչ առիթներ գործածելով և ինչ միջոցներ բանեցնելով իրենց ազգը կրթեցին ու պայծառացուցին։

(Մամուլի հրատարակության պատմությունը)

Այս իրավունքով և մանավանդ աղեկ հասկնալով ազգիս ուսումնասիրական եռանդը, խրախույս առին քանի մը ուսումնասեր անձինք քաղաքիս, *Արագածունյաց* անունով նոր ընկերություն մը հաստատելով՝ նոր տպարան մըն ալ հիմնավորել ազգօգուտ գիրքեր տպելու և նոր օրագրություն մըն ալ հրատարակելու։ Ահա այժմիկ հաջողությամբ տեառն՝ սույն հայտարարությամբ առաջին թիվը կը մատուցանեմք Ազնվամիտ ազգիս։

Ծանոթություն

ա) Այս օրագրությունը շաբաթը անգամ մը տպվելու է պարզ աշխարհաբար ոճով։

բ) Տպվելու բաները քաղաքական արժանի լուրեր ըլլալու են և առևտրական հարկավոր ծանոթություններ, աշխարհագրական պատմություններ, հետաքրքրական տեղեկություններ, զվարճալի ու անմեղ խոսքերով, և ինչ-ինչ մեր նախնիքներուն գիրքերեն քաղվածքներ և ուրիշ լեզուներե թարգմանություններ ալ ըլլալու է։

գ) Հայրենասեր օրագրությունը զգույշ ըլլալու է տերությանց վերաբերյալ վեճերեն և հեռի պիտոր ըլլա հավատքի վրա առարկաներեն, վասն զի սրբազան բաներուն վրայոք դատելը սրբազաններուն համար պահված ըլլալը հայտնի է։

դ) Ազգիս հոգևորական կամ աշխարհական ուսումնականներեն ազգային օգտին համար թե որ մասնավոր բան մը հորինելով կամ թարգմանելով կուզե հրատարակել, կրնա ղրկել Հայրենասեր օրագրության վերատեսչին և հաճությամբ կը տպվի առանց վարձքի Բանասիրական մասին դասելով։ Ասանկ ալ որ քաղաքին որ ըլլա թող ըլլա։ Ազգիս դպրատուններուն նորահասակ աշակերտները թե ընդարձակ բան մը կամ ոտանավոր մը շարադրած ըլլան, կրնան ղրկել տպվելու համար. որ ասանկով թե իրենց առաջ երթալնուն, և թե վարժապետներուն ջանքին ապացույց

մ'ըլլալեն ի զատ, ուրիշ դպրատան աշակերտներուն ալ բարի նախանձավորություն մը կը պատճառեն.

զ) Գինը 125 դուրուշ է մեկ տարին»։

● Մայիսի 23-ին տեղի է ունեցել Սարգսյան դպրատան աշակերտուհիներին տարեկան հարցաքննությունը։ Քննվել են հայերեն (ընթերցանություն), հայերեն (քերականություն), ֆրանսերեն (թարգմանություններ), և ձեռագործ։

● Ստորագրություն և անցք Զմյուռնիո

● Իզմիրն արտահանում էր Լոնդոն, Փարիզ, Վիեննա, Մարսել, Թրիեստ, Օդեսսա, Կոստանդնուպոլիս, Լիվորնո։

● Քաղաքի կառավարիչը կոչվում էր Մեհեմմետ Համտի պեյ։

● Սարգսյան Հակոբ աղա. Վիեննայում ապրող իզմիրցի հարուստ։

25 հունիս (ուրբաթ), N 5, 1843 թ.

...Ինչպես մեկն այն դիեն գուցե ըսե, թե ինչ պիտոր ըլլա այս՝ մեկ օրագիր այս քաղաքիս հերիք է։ ՈՒրիշ մըն ալ մարթ է գուշակություն ընե, թե այս երկու օրագիրը անպատճառ մեկզմեկու հետ իյնալով խռովության առիթ մը ըլլալու են ազգիս մեջ. և ուրիշ ավելի ազգասեր մըն ալ (թեպետ մեր կարծիքն է) հնարե ազգիս անվանը վրա մեծ նախանձավորություն մը ունենալուն համար ըսե թե այսպես բարակնալով՝ Եվրոպացվո՞ց հետևելու եմք. կամ ևս առավել մեկ անպատշաճ դատողություն մըն ալ, թե մեր ազգը այնքան ծախք չի կրնար վերցնելու։

...Անոնք, որ խռովութենեն կըվախնան, եթե այս օրագիրներուն գործակալ և վերակացուաց ազգասեր բնավորությունը և խոհեմ դիտավորությունները լավ մը ճանչնան, իհարկե այդքան կասկածոտ չեն ըլլար։ Որքա՞ն անխոհեմ ըլլալ պետք էին այս պաշտոնյա գործակատարները, որ մեկզմեկու հետ իյնալով, Ազգիս մեջը զզվելի երևնալու պատճառներ տային. կարծեմ թե կռիվ ընելով Ազգին օգուտ մը չընելեն ի զատ, իրենց ալ ինչե՞ր հետևելիքը աղեկ կճանչնան. սիրով և միաբանությամբ իրարու հետ վարվիլը իրենց գլխավոր պարտքը ըլլալն ալ քաջ գիտեն։ Շատ անխոհեմ կըլլայինք, եթե այս օրագրերուն պաշտոնը վեճ ըլլային, բայց հույսերնիս շատ է, որ եթե հասարակաց մեջ այս անհիմն կարծիք կա նե ալ, մեր ճշմարիտ ապացույցներով իրենց սխալիլը կիմանան։

...Թողունք եվրոպացվոց կարգավորյալ ազգերը. գոնե հունա՞ց ալ չեմք կրնար նմանիլ, եթե հասարակության բարի կամքը չի պակսի, որոնք միայն Հունաստանի փոքրիկ տերության մեջ երեսունի չափ օրագրեր ունին։

● Սարգսյան Հակոբ աղայի քրոջ անունը Հռիփսիմե էր, որը վախճանվեց 1843 թ. մայիսին։

● Ստեփան Յ. Մելիք Սելումյան, որ ապրում էր Նախիջևանում։

8 հոկտեմբեր (ուրբաթ), N 20, 1843 թ.

ՈՒրախ սրտիվ կը փութանք մեր բարեմիտ ընթերցողներուն ծանուցանել, որ ամիսե մը ավելի է, քաղաքիս երկու օրագիրներուն քանի մը թիվերուն մեջ անոնց վերատեսուչներուն դիտավորությանցը դեմ և կամացը անգամ անհաճելի՝ քանի մը գրված հոդվածներուն վրայոք առաջ եկած անվայել շարժվածքներեն՝ քաղաքիս հասարակությանը մեջ բավական շշունջ ըլլալովը՝ գովելի միաբանության, սիրո կապը անգամ կը թուլանար. թեպետ ասանկ անօգուտ վիճաբանությունները օրագրությանց մեջ տեղի տալով, բարեսիրտ հասարակությանը ականջին ալ ձանձրացունելու արժանի չըլլալը հայտնի է, բայց ինչնիցե, տարաձայնությունը գնալով քաղաքիս կառավարիչ վսեմաշուք Համտի պեյին ականջին ալ հասնելով, որ իր վաղեմի մարդասիրաբար կառավարությանը համեմատ՝ այս բանին ալ՝ իր խոհական կարգադրությամբը խնամք տարավ հանդարտելու և հասարակության մեջ անզգուշաբար եղած շշունջները խափանելու։

Այս պարագայիս մեջ շնորհ ունիմք նաև քաղաքիս բարեկարգ առաջնորդ Տեր Մատթեոս Արքեպիսկոպոս սրբազան մեր հորեն, որ իր խաղաղասեր բնավորությամբը հոգ տարավ ինչպես որ պետք է նե,այն վիճաբանություններեն առաջ եկած քանի մը երևելիներուն մեջ իրարու հետ սրտի վիրավորությունները ապաքինելու և սեր՝ միաբանությունը վերստին հաստատելու, և հասարակության մեջն ալ եղած այլևայլ տարաձայնությունները բոլորովին վերջացունելու համար, անցյալ կիրակի սուրբ եկեղեցվույն մեջ շատ ազդու քարոզ մը տալով, հիրավի հասարակաց եռանդը ավելի ևս բորբոքեց սիրո և միաբանությանը վրա։

● Կը պարտավորվինք հրատարակել քաղաքիս ս.Մեսրոպյան դպրատան վերատեսուչ գերահարգ աղա Ստեփան Գալֆայանի ազգասիրական գովելի եռանդը հիշյալ դպրատանս բարեկարգության և առաջադիմության վրայոք։

Բայց հիմա օր օրե աշակերտներուն թիվը շատնալով, դպրատանս մեջ եղած սենյակները չի բավականալեն ի զատ, հայերեն քերականության դասատու վարժապետն ալ, թեև հոգով չափ իր աշխատասիրությունը չի խնայեր նե ալ, հիշյալ դպրատանս մեջ հատուկ մեկ նոր մեծկակ սենյակ մը շինվելով, բարեհիշատակ Տեր Հովնան մեծիմաստ վարժապետին որդի, պատվելի Գրիգոր վարժապետին հանձնվեցավ 50-ի չափ աշակերտներով, որ հայերեն քերականություն ալ դաս տա։

15 հոկտեմբեր (ուրբաթ), N 21, 1843 թ.

«Մայրաքաղաքիս մեջ ազգօգուտ գործողություններուն մեկն ալ ՈՒսումնական *ընկերությունը* կը ճանաչենք, ուր բավական ժամանակ է, որ հաստատված է։ Այս ամենագովելի ընկերության՝ նորենոր ընտիր գրքեր թարգմանել և հորինել տալովը և զանոնք ի տիպ արձանացուցանելու համար, որո մինչև հիմա տասը հատի չափ տպվածը տեսանք, արդեն զանազան քաղաքներ ազգիս հայրենասեր անձինքներեն յոժարական փութով բավական բաժանորդներ կը գտնվին։

(Խաչատուր Մելիքսելումյանցին ընտրել են այդ ընկերության խորհրդական անդամ)։

Ազգային բարենպատակ ընկերություններուն մեջ Ձեզի պես հայրենասեր ու ջանասեր անձանց գտնվիլը իրավ որ շատ ցանկալի է. անոր համար մեր ՈՒսումնական ընկերությունը ձեզ խորհրդական անդամ անվանել կը ցանկա։

Վերատեսուչ՝ Գևորգ Փեշտիմալճյան

Հոգաբարձուք և խորհրդական անդամք.

Նիկողայոս Հովյանց

Մկրտիչ Աղաթոն

Սահակ Փեշտիմալճյան

Հակոբ Ճապիյան»

● Զմյուռնիո պարծանքները.

Քաղաքի մասին խոսել են.

Փիղոստրատոս

Ստրաբոն

«Հունաց հինգ եկեղեցի, հիվանդանոց մը, մեկ ուսումնարան և հինգ հասարակ դպրոց տղոց համար, և երեք ալ աղջկաց։

Լատինացվոց 4 եկեղեցի, մեկ վարժարան, որ փրոփականդայի դպրոց կըսվի և աղջկանց դպրատուն մը։

Ասոնցմե ի զատ կան մզկիթներ, հրեից սինակոկաներ, խաներ և իջևաններ և եվրոպացվոց զանազան ազգաց՝ զատ զատ հիվանդանոցներ կան. նաև 3 ժողովարան (քազինո) և մեկ թեաթրո»։

Ծանոթ. Զմյուռնիո հիմնավորությունը և անվանագրությունը որ քաղաքիս ս. Մեսրոպյան վարժարանին հույն լեզվի գիտնական վարժապետին հրատարակած բանասիրական օրագրեն թարգմանեալ գրվեցավ, և հիմա այս ալ նույն օրագրեն քաղված է։

Թարգ. Ռուբեն Գալֆայան, Պոլսեցի

● Վաճառականության յարգին վայելուչ հանգամանք (խրատներ վաճառականությամբ զբաղվողներին)

«Այս թեություններուն ամենեն երևելիներեն մեկն է վաճառականներուն վայելած հավատարմության հարգը, որով կը տեսնանք, թե ինչ ստակ ունեցող վաճառականը ավելի դյուրությամբ կրնա գործքը տեսնալ, քան թե ստակ ունեցող անհարգ անձ մը։ Զգուշությամբ պահված հարգը ամենեն հարուստ դրամագլուխն է վաճառականին, վասն զի շատ անգամ տեսնվեր է, թե մեծամեծ դրամագլուխներ քիչ տարիներու մեջ կորսվեր են և տերերը ուրիշներեն ալ հափշտակելով անարգաբար լուծեր են գործքերնին. անոր հակառակը շատ վաճառականներ ալ ամմեն բաներնին կորսունցեր են. և եթե ուրիշներուն ալ պարտական մնացել են, կամաց-կամաց լմանը հատուցանելու հոժարությամբ հարգերնին չկորսնցուցեն են ու ետքը առաջինեն ավելի մեծցեր են։

...Ասկե ի զատ, ընդհանրապես, այսինքն ազգային դիտողության վրա առնելով, մասնավոր հարստություններեն ավելի նախադաս համարել պետք է ազգային հարգը, առ հասարակ

պատվավոր վիճակի մեջ հաստատելը, որովհետև մեկ քանի հարուստներով ազգը երևելի չկրնար ըլլալ, այլ վաճառականաց հասարակությանը հաստատ հարգով և պատվելի բարոյական համբավով։

... Անպատիվ ընթացքեն զգուշանալեն պակաս հարկավորություն մը չէ վաճառականին՝ շռայլութենեն զգուշանալը և ամեն բանի մեջ խնայողությունը ձեռքե չձգելը։ Ամեն բանի մեջ, կըսեմ, որովհետև խնայողությունը ոչ միայն առևտուրին, այլ տնական և ուրիշ ծախքերուն մեջ ալ գործածել պետք է։ Վաճառականին ամենեն ստույգ շահը խնայողությունն է և ամենեն անընդմիջական վնասը շռայլությունն է։

Խոստմունքին մեջ հաստատ մնալը պատվավոր վաճառականին երևելի թեությունն է։ Ով որ խոստմունքը չի կատարեր, վաճառականության պատիվին արժանավոր չէ որովհետև՝ է՛ որ սովորությամբ, և է՛ որ կանոնով հաստատված է, թե վաճառականին խոստմունքը ստակի պես անցնի, ինչպես Եվրոպայի մեջ ստորագրությամբ պատրաստված գումարը ստակի տեղ կանցնի, վասն զի օրին կը հատուցվի՝ և օրենքն ալ անանկ կը պահանջե։